

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ ՅՈՒ Ն

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՏԱՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. ՀՀ Կոտայքի մարզի Թեղենիքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ժածկագիր 3.1-1/.

- իրականացնում է հաշվապահական հաշվառում, գույքահարկի, հողի հարկի հաշվարկներ, պաշտոնի անձնագրով սահմանված այլ գործառույթներ

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) միջնակարգ կրթություն, առանց աշխատանքային ստաժի,

բ) „Համայնքային ծառայության մասին“, Հանրային ծառայության մասին“,

„Տեղական ինքնակառավարման մասին“, „Հողի հարկի մասին“ և „Գույքահարկի

մասին“ Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի

կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի

անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում

կողմնորոշվելու ունակություն.

գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը կկայանա 30-ը հունվարի 2018 թվականի ժամը 11:00-ին Թեղենիքի համայնքապետարանի շենքում (գ,Թեղենիք 3-րդ փողոց 1շենք):

Փաստաթղթերի ներկայացման վերջին ժամկետն է 15. 01.2018թ:

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

. դիմում մրցութային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)

. տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ բավարարում հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները, բնօրինակների հետ միասին:

. արական սեռի անձինք նաև գինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին

. մեկ լուսանկար 3x4 սմ չափի

. անձնագրի պատճենը

Փաստաթղթերը ընդունվում են Թեղենիքի համայնքապետարանի աշխատակազմում հեռ. 060466492, կամ ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնում, հեռ. 0223 2 34 13, ժամը 10օօ-ից մինչև 15օօ-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: